ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 387
Մարտ 20, 1991

Արժանաշնորհ
Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Փըրչէյս.

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացուած են համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 18, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 24, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Շահէն Կիրակոսեան
Մարթա Կիւրահեան
Ռիչըրտ Բաբալեան
Մարկրիթ Սաղաթէլեան
Ալիս Շիմշիտեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Կը շնորհաւորեմ Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթեմ որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Աղօթակից

Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան
Առաջնորդի Փոխանորդ